ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1245-Ա/2 «01 » նոյեմբերի 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 758-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով ՝

Հրամայում եմ՝

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 25-ի>> N 758-Ա/Ք հրամանով հաստատված <<Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկան երեխաների) կրթական համալիր ծրագրի՝

1) **«Խոսքի զարգացում»** բաժինը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

<<(3-րդ եռամսյակ)

- Զրույց՝ <<Ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբեր մանկապարտեզն ու դպրոցը>>

- Ոտանավորի ուսուցում՝ Լ. Սարգսյան <<Ի՞նչ կլինի>>

- Ոտանավորի ուսուցում՝ Ֆ. Կիրակոսյան <<Ես էլ դպրոց կգնամ>>

- Նպատակային էքսկուրսիա՝ մոտակա դպրոց (այն կարելի է ինտեգրել կերպարվեստի հետ. վերադառնալուց հետո երեխաները նկարում են իրենց տպավորությունները և ստեղծում գիրք՝ դպրոցի մասին)

- Դիդակտիկ վարժություն՝ <<Ես սիրում եմ իմ դպրոցը, որովհետև...>>

- Խաղ-մրցույթ՝ <<Ամենախելացի ապագա առաջին դասարանցին>> (Երեխաները պատասխանում են դաստիարակի հարցերին՝ կռահելով տարբեր ստեղծագործությունների, հեքիաթների հերոսներին: Ներկա է նաև առաջին դասարանի ուսուցչուհին)

- Գեղարվեստական գրականություն՝ <<Պատմվածքներ և պատմություններ դպրոցի մասին>>>>,

2) **«Կերպարվեստային գործունեություն» բաժինը** լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

<<(3-րդ եռամսյակ)

Նկարչություն

- Ստեղծագործական նկարչություն՝ <<Դպրոցն իմ աչքերով>>

- Հիշողությամբ նկարչություն՝ <<Առաջին անգամ դպրոցում>>

Ծեփ

- <<Ես և իմ դպրոցական ընկերները՝ ֆիզկուլտուրայի ժամին>>

Ապլիկացիա

- <<Գեղեցիկ ծաղիկներ՝ իմ առաջին ուսուցչուհուն>>

Կառուցողական

- Օրիգամի՝ թղթի ծալումներով <<Դպրոցական պայուսակ>>>>,

3) **<<Երաժշտություն>> բաժինը** լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

<<(3-րդ եռամսյակ)

- Խոսք՝ Ս. Մուրադյանի, երաժշտությունը՝ Հ. Խրիմյանի, <<Հրաժեշտ մանկապարտեզին>>

- Խոսքը և երաժշտությունը՝ Ս. Սարուխանյանի, <<Հարազատ դպրոց>>

- Խոսք՝ Ս. Մուրադյանի, երաժշտությունը՝ Լ. Համբարձումյանի, <<Մայրիկն ու այբուբենը>>>>,

4) **<<Ընտանիք-մանկապարտեզ-դպրոց>> բաժինը** լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

<< Մանկապարտեզ-դպրոց սահուն անցումն ապահովելու նպատակով ընտանիք-մանկապարտեզ-դպրոց համագործակցության արդյունքում կարևորվում է հետևյալ խնդիրը՝ ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի և դպրոցի կյանքին: Այդ առումով անցկացվում են հետևյալ աշխատանքները.

<<Ծանոթության այցեր>>

Այցելություն դպրոց՝ դպրոցական միջավայրին ծանոթանալու նպատակով, տեղեկանալու, թե ի՞նչ առանձնահատկություններ/ավանդույթներ կան դպրոցում, ինչի՞ն և ինչպե՞ս պետք է նախապատրաստվել, ինչպիսի՞ դերակատարում ունեն ծնողները դպրոցական առաջին օրերի ընթացքում…

Տունայցեր՝ ապագա դպրոցականի ընտանեկան միջավայրին ծանոթանալու և ծնողների հետ գործընկերական ջերմ հարաբերություններ հաստատելու նպատակով:

<<Համատեղ միջոցառումներ>>

Ծնողները մասնակցում են համատեղ միջոցառումների՝

ա) մանկապարտեզում՝ <<Գարնան զարթոնքի և մայրության տոն>>, <<Հրաժեշտ մանկապարտեզին>>… (մասնակցում է նաև դպրոցի ուսուցչուհին)

բ) դպրոցում՝ <<Գիտելիքի օր>>, <<Ա տառի շնորհանդես>>… (մասնակցում է նաև մանկապարտեզի դաստիարակը)

Նպատակահարմար է տարվա ընթացքում անցկացնել մրցույթ՝ <<Ամենահամերաշխ ընտանիքը>>: Դրան մասնակցելու համար ընդհանուր ծնողական ժողովում ընտրվում են ամենաակտիվ ծնողներն ու իրենց երեխաները:

Համատեղ քննարկումներ

- <<Ի՞նչ դեր ունեն ծնողները և ինչպե՞ս պետք է նպաստեն անցման գործընթացին>>

- <<Ի՞նչ դեր պետք է ունենա դպրոցը նոր միջավայրին երեխայի հարմարվելու գործընթացում>>

- <<Դպրոցական կյանքին սոցիալապես հարմարվելու ինչպիսի՞ խնդիրներ պետք է լուծի մանկապարտեզը>>

- <<Ինչպե՞ս կազմակերպել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սահուն անցումը>>

<<Ցուցումներ ծնողներին>>

- Դրական վերաբերմունք ձևավորե՛ք դպրոցի նկատմամբ և հաճույքով օժան-դակեք Ձեր երեխայի ուսումնառության գործընթացին:

- Ծանոթացե՛ք դպրոցին և ներկայումս կիրառվող կրթական համակարգին:

- Հանդիպումներ ունեցե՛ք դպրոցի ուսուցչի և դպրոցի տնօրենի հետ:

- Օգնե՛ք երեխային՝ ձեռք բերել սեփական խնամքի հետ կապված որոշ հմտություններ:>>,

5) **<<Տոներ, զվարճություններ>>** բաժինը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

- <<Փոքր մարդկանց մեծ իրավունքները>>

- <<Ճանաչիր քո իրավունքները>>:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ